


ՊԱՏԱՆԻ ՄԱԹԵՄԱՏԻԿՈՍ - 2016

ԵԶՐԱՓՈՒԿՉ ՓՈԻԼ, 7-րդ դասարան, տևողությունը՝ 120 րոպե

Խնդիր 1: $A = 2^{45}$, $B = 3^{36}$, $C = 4^{27}$, $D = 5^{18}$ թվերը դասավորել աճման կարգով:

Խնդիր 2: Բազմանդամը վերլուծել արտադրիչների. $x^3 - 3x^2 + 3x + 7$:

Խնդիր 3: 40 երեխա բռնել են շուրջպար: Նրանցից 22-ը բռնել էին տղայի ձեռք, իսկ 30-ը՝ աղջկա: Քանի՞ աղջիկ էր մասնակցում շուրջպարին:



Խնդիր 4: ABC եռանկյան A գագաթից տարված բարձրության երկարությունը երկու անգամ փոքր է BC կողմից: Հայտնի է, որ $\angle ABC = 75^\circ$: Գտնել BAC անկյան մեծությունը:

Խնդիր 5: 5×5 չափսերով քառակուսու վանդակներում թվերը դասավորված են այնպես, որ բոլոր տողերում և բոլոր սյունակներում գրված թվերի գումարները հավասար են: $ABCD$ քառակուսու վանդակներում գրված թվերի գումարը հավասար է 10-ի, իսկ $MDEF$ քառակուսու վանդակներում գրված թվերի գումարը հավասար է 25-ի: Գտնել աղյուսակի բոլոր թվերի գումարը:

